ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հայաստանի անկախության վերականգնումը IX դարում: Բագրատունիներ

Հետազոտվող ուսուցիչը՝ Վահագն Թառոյան

«Գեղարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բագրատունիներ 3

Հայոց պետականության վերականգնում 4

Աշոտ Բ Երկաթ (914-928).....6

Ենթակա թագավորությունների առաջացում.....7

Աշոտ Գ Ողորմած (953-977) 7

Բագրատունյաց տերության անկում.....9

Բագրատունիները՝ Արքայից արքա 11

Գագիկ Ա՝ հայոց շահնշահ (990-1020): Հայկական ավատատիրության առանձնահատկությունը 12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

Բագրատունիներ

Հելլենիստական շրջանում՝ Արտաշեսյանների ու Արշակունիների օրոք, Բագրատունիները կարևոր տեղ են զբաղեցրել թագավորի արքունիքում։ Ավատատիրական կարգերի հաստատումից հետո նրանք հայտնվում են զորանամակում և գահնամակում՝ հիշատակվելով երկրորդը Սյունյաց նախարարությունից հետո։

Քրիստոնեության ընդունումից հետո՝ մինչև Արշակունիների թագավորության անկումը (301-428), Բագրատունիներին է պատկանել թագադիր ասպետի արքունի գործակալությունը։ Նրանց ժառանգական տիրույթը Բարձր Հայք նահանգի Սպեր գավառն էր։ Հայկական մարզպանության օրոք (428-642) Բագրատունիները աստիճանաբար ընդարձակել են իրենց տիրույթները, Տայք նահանգի սահմաններից անցնելով Այրարատ։

Հռոմեական (395 թվականից՝ Բյուզանդական) կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Մերձավոր Արևելքի համար դարեր տևած պայքարը 7-րդ դարում ավարտվում է։ Քաղաքական ասպարեզ է իջնում Արաբական խալիֆայությունը, որը կարողանում է չորս անգամ կրճատել Բյուզանդիայի տարածքները և ամբողջությամբ նվաճել Իրանը։ Մի քանի տասնամյակում Ատլանտյան օվկիանոսից մինչև Հնդկաստան ընկած բոլոր հողերը միավորվում են իսլամի կանաչ դրոշի ներքո։ Հայաստանը նույնպես մտնում է Արաբական խալիֆայության կազմի մեջ և հարևան Վրաստանի, Աղվանքի ու Դերբենդի հետ կազմում է մեկ վարչատարածքային միավոր՝ Արմինիա կուսակալություն՝ Դվին մայրաքաղաքով։

7-8-րդ դարերում քաղաքական գերիշխանության համար մրցակցությունն ընթանում էր հայկական 2 հինավուրց իշխանական տների՝ Բագրատունիների ու Մամիկոնյանների միջև։ Վերջիններս ավելի քան կես հազարամյակ ղեկավարում էին Հայաստանի ռազմական ուժերը և զնաղեցնում էին հայոց սպարապետի պաշտոնը։ Երկու տոհմերի ներկայացուցիչներն ընդգրկվում էին քաղաքական տարբեր հարթակներում, զբաղեցնում ամենաբարձր պաշտոնները։ 8-րդ դարում հարատև պայքարն ավարտվում է Բագրատունիների հաղթանակով, ովքեր իրենց տիրույթներին են միացնում Կամսարականների (Շիրակ) և Մամիկոնյանների (Տարոն)

կալվածքները։ Բագրատունիների գերիշխանության տակ էին բազմաթիվ նախարարական տներ, որոնց մեջ առանձնանում էին Վասպուրականի և Վրաստանի գահերեց իշխանները, Սյունիները և ուրիշներ։ Նույն ժամանակաշրջանում Բագրատունիները հաստատվել են նաև Տայք նահանգում ու Կղարջք գավառում (Գուգարք)։ 9-րդ դարի վերջին Վրաստանում հիմնել են թագավորական հարստություն, որը հայտնի է որպես Բագրատիոնի։ Նրանց իշխանական գլխավոր կալվածքը Տայքի կյուրոպաղատությունն էր։ Հայ Բագրատունիների տոհմական կենտրոնը Բագարանն էր։ Նրանք դարձել են ամենաազդեցիկ տոհմը և ժառանգաբար կառավարել երկիրը, նախ որպես Հայոց իշխան, ապա՝ Իշխանաց իշխան, սպարապետ, և 885 թվականից՝ թագավոր։

Հայոց պետականության վերականգնում

850-855 թվականների հակաարաբական մեծ ապստամբությունից հետո Բաղդադի խալիֆ Ջաֆար իբն Մուհամմադ ալ-Մութավաքքիլը հաշտվում է քրիստոնյաների ինքնուրույնության հետ և կառավարիչ նշանակում ապստամբության ղեկավար Աշոտ Բագրատունուն։ 862 թվականին վերջինս դառնում է նաև իշխանաց իշխան և ռազմաքաղաքական իշխանությունից զատ տնօրինում նաև երկրի հարկային համակարգը ու տնտեսական կյանքը։ Համախմբելով Արծրունիների, Սյունիների և վրաց Բագրատունիների իշխանական տները՝ Աշոտ Բագրատունին քայլ առ քայլ գնաց դեպի անկախություն։ 869 թվականին հայոց կաթողիկոս Զաքարիա Զագեցին, ում նստավայրը կուսակալության կենտրոն Դվին քաղաքն էր, գումարում է ժողով, որի ժամանակ որոշվում է Աշոտ Բագրատունուն օծել հայոց թագավոր։ 876 թվականին Կոստանդնուպոլսում գահ բարձրացած հայազգի Վասիլ կայսրը նույնպես օժանդակում է հայոց պետականության վերականգնմանը։ 885 թվականին՝ մոտ կեսհազարամյա դադարից հետո, վերականգնեց Հայաստանի կորսված անկախությունը և Գևորգ Գառնեցի կաթողիկոսը Բագարանում Աշոտին օծեց հայոց թագավոր։

Հայոց արքան քայլեր ձեռնարկեց հայկական տարածքներն իր իշխանության ներքո միավորելու համար։ Նա ճնշեց Վանանդի իշխանների ելույթը և Վանանդ

գավառը Կարս բերդաքաղաքով միացրեց իր տիրույթներին՝ այն դարձնելով հայոց սպարապետների աթոռանիստը։ Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի իշխանական տների հետ հաստատելով բարեկամական կապեր՝ Աշոտ Ա-ն նրանց ևս ենթարկեց իր իշխանությանը։ Գուգարքի, Արցախի և այլ նահանգների տարածքում գոյություն ունեցող հայկական առավել փոքր իշխանությունները, ինչպես նաև Հայաստանի հարավի արաբական ամիրայությունները նույնպես ընդունեցին Աշոտի գերագահությունը։ Աշոտ Մեծը ճակատամարտում պարտության մատնեց կովկասյան լեռնականներին, որոնք ասպատակում էին Վիրքը և Աղվանքը։ Հայոց թագավորի գերիշխանության ու ազդեցության տակ հայտնվեց նախկին Արմինիա կուսակալության ամբողջ տարածքը։ Դվինում նստող ոստիկանի իշխանությունը դարձավ ձևական ու սահմափակվեց Արարատյան դաշտի մի մասով։

Աշոտ Բագրատունուն հաջորդեց որդին՝ Սմբատ Ա-ն (890-914)։ Նա իրեն ենթարկեց Աբխազաց (Արևմտավրացական) թագավորությունը և կայազորներ հաստատեց Ալանաց դռներում։ Սմբատը թագավորական թագ տվեց վրաց Ատրներսեհ (Ադառնասե) իշխանին և Հայոց Արևելից կողմերի Համամ իշխանին, իսկ իրեն հռչակեց «Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց»։ Արտաքին քաղաքականությունը իրականացնելու և միջազգային հարաբերությունների ոլորտում հավասարակշռության հասնելու նպատակով 893 թվականին բարեկամության և առևտրական նոր պայմանագիր կնքեց Բյուզանդիայի կայսր Լևոն Իմաստասերի հետ։ Արդյունքում Ատրպատականի Սաջյան ամիրա Աֆշինի զորքերը ներխուժեցին Հայաստան։ Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արաբները պարտություն կրեցին։

9-րդ դարի սկզբին Վասպուրականի և Սյունիքի իշխանների միջև վեճ առաջացավ Նախճավան քաղաքի համար։ Հայոց արքան վեճը լուծեց հօգուտ Սյունիների։ Սմբատից դժգոհ Գագիկ Արծրունին բանակցություններ սկսեց Ատրպատականի նոր ամիրա Յուսուֆի հետ։ Վերջինս միջնորդեց խալիֆի առաջ՝ Սմբատի փոխարեն հայոց թագավոր ճանաչելու Գագիկ Արծրունուն։ Խալիֆի ուղարկած թագով 908 թվականին Յուսուֆը նրան թագադրեց որպես հայոց արքա՝ նրան վերապահելով նաև Հայաստանից հարկեր հավաքելու իրավունքը։ Յուսուֆը Գագիկ Արծրունու հետ համատեղ հարձակվեց Սմբատի զորքերի վրա։ Նրանց միացան

նաև այլ հայ իշխաններ։ Բյուզանդական կայսեր մահից հետո (912) Սմբատ Ա-ն մնաց առանց դաշնակիցների։ Արքան փոքր զորագնդով ամրացավ Կապույտ բերդում և մեկ տարվա դիմադրությունից հետո անձնատուր եղավ։ Յուսուֆը հայոց թագավորին կալանավորեց և ուղարկեց Դվինի բանտ, անյտեղից՝ Նախճավանի Երնջակ բերդ՝ ամրոցի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման արձակելու համար։ Սմբատը բերդապահներին դիմադրությունը շարունակելու կոչ արեց, ինչի արդյունքում ենթարկվեց մահապատժի (914)։ Արաբները թագավորի մարմինը Դվինում խաչի վրա գամեցին։ Անկախության պահպանման համար համաժողովրդական պայքարը գլխավորեց Սմբատ Ա-ի ավագ որդի Աշոտ Բ-ն (914-928), ում ժողովուրդը խիզախության և տոկունության համար «Երկաթ» մականունը տվեց։

Աշոտ Բ Երկաթ (914-928)

Աշոտ Երկաթը ոչնչացրեց կամ դուրս վռնդեց երկրի կարևոր բերդերում ամրացած արաբական զորագնդերը։ Հայ իշխաններն աստիճանաբար համախմբվեցին Աշոտ Երկաթի շուրջը։ 921 թվականին Աշոտ Բ-ն իր փոքրաթիվ զորաջոկատով ամրացավ Սևանա կղզում։ Արաբական զորքերի հրամանատար Բեշիրը զորքեր կուտակեց Սևանա լճի ափին, փորձեց գրավել կղզին։ Սևանի ճակատամարտում արաբները պարտություն կրեցին։ Այս իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում։ Սևանի հաղթանակից հետո հայկական զորաբանակները Աշոտ Բ-ի և նրա եղբայր Աբաս սպարապետի գլխավորությամբ արաբներից ազատագրեցին կենտրոնական Հայաստանի մեծ մասը։ Այնուհետև նրանք հաղթանակ տարան նաև Թիֆլիսի արաբական ամիրայության նկատմամբ։ Որոշ ժամանակ անց Նիկողայոս պատրիարքը նամակ գրեց հայոց Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին, որից հետո Աշոտ Բ-ն մեկնեց Կոստանդնուպոլիս և դաշինք կնքեց Կոստանդին Ծիրանածին կայսեր հետ։ 922 թվականին խալիֆը Աշոտ Բ-ին թագ ուղարկեց և ճանաչեց նրան Հայաստանի շահնշահ, այսինքն՝ արքայից արքա։

Բագրատունիների գերագահությունն ընդունեցին ոչ միայն արաբ ամիրաները, այլև կենտրոնախույս հայ իշխանները, այդ թվում՝ Գագիկ Արծրունին, ով բավարարվեց

Վասպուրականի թագավոր տիտղոսով։ Հայոց թագավորները, որ շարունակում էին կրել «Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը, շարունակեցին պահպանել իրենց իշխանության ներքո այսրկովկասյան երկրները մինչև հայոց Գագիկ Ա թագավորի գահակալության վերջը։

Ենթակա թագավորությունների առաջացում

Ավատատիրական հարաբերությունները եղել են մարդկության հիմնական ապրելակերպը ամբողջ միջնադարի ընթացքում. վաղ միջնադարում (4-7-րդ դարեր) դրանք սկսել են ձևավորվել գրեթե բոլոր եվրոպական պետություններում ու Մերձավոր Արևելքում, զարգացած միջնադարում (8-14-րդ դարեր) հաջորդել է մասնատվածության փուլը և պետությունները բաժանվել են տարբեր ինքնուրույն միավորների, իսկ ուշ միջնադարում (15-17-րդ դարեր) դրանք սկսել են քայքայվել՝ տեղի տալով կապիտալիստական հասարակարգին ու շուկայական հարաբերություններին։ Բագրատունիների թագավորությունը, առաջանալով զարգացած միջնադարում, ենթարկվել է ավատատիրական մասնատվածության։ Նրա գոյության տարիներին երկրի տարածքում առաջացան Վասպուրականի, Կարս-Վանանդի, Տաշիր-Զորագետի, Սյունիքի թագավորությունները, Տայք-Կղարջքի, Խաչեն-Փառիսոսի, Տարոնի իշխանությունները, որոնք ենթակա էին Բագրատունի շահնշահին։ Վերջինիս գերագահությունն ընդունում էին նաև արաբ ամիրաներն ու վրացի էրիսթավիները։

Աշոտ Գ Ողորմած (953-977)

Անժառանգ Աշոտ Երկաթի եղբայր Աբասին (928-953) հաջորդեց որդին՝ Աշոտ Գ Ողորմածը (953-977)։ Նա մեծացրեց զորքի թվաքանակը։ 966 թվականին Տարոնի իշխանության բռնակցումից հետո՝ 974 թվականին, Բյուզանդիայի կայսր Հովհան Չմշկիկը արշավեց Հայաստանի վրա։ 80 հազարանոց հայկական բանակը Աշոտ Գ-ի գլխավորությամբ դուրս եկավ բյուզանդացիների դեմ՝ թույլ չտալով նրա առաջխաղացումը դեպի երկրի խորքերը։ Աշոտ արքան մայրաքաղաքը Կարսից տեղափոխել է Անի։ Այն կառուցվել էր Ախուրյան և Անի գետերի միախառնման

վայրում՝ ծովի մակերևույթից 1500 մետր բարձրությամբ հրվանդանի վրա։ Այս տարածքը Հայաստանի հնագույն բնակավայրերից էր, որտեղ պահպանվել են կիկլոպյան պարիսպի մնացորդներ, մ.թ.ա. 8-7-րդ դարերի դամբարաններ։ Եղիշե պատմիչն և Ղազար Փարպեցին Անին առաջին անգամ հիշատակում են 5-րդ դարում՝ որպես Կամսարական իշխանների ամրոց։ 783 թվականին Բագրատունի իշխան Աշոտ Մսակերը Կամսարականներից գնել է Արշարունիք և Շիրակ գավառները՝ Անի ամրոցի հետ։ Քաղաքամայր Անիից զատ՝ երկրի գլխավոր կենտրոններում հիմնվեցին բերդեր ու ամրոցներ, վանքեր ու եկեղեցիներ, դպրոցներ ու հիվանդանոցներ, կամուրջներ ու իջևանատներ։ Անիի՝ մայրաքաղաք դառնալուց երկու տարի անց՝ 963 թվականին, Վանանդ գավառը Կարս բերդաքաղաքով առանձնացավ որպես ինքնուրույն թագավորություն (963-1065)՝ կրտսեր Բագրատունիների գլխավորությամբ։ Դա երկրորդ թագավորությունն էր՝ Վասպուրականից հետո (908-1021)։

Աշոտ Ողորմածի կինը՝ Խոսրովանույշ թագուհին Զորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի վանքերը։ Դրանք դարձան միջնադարյան Հայաստանի մշակույթի խոշորագույն կենտրոններ։ Տաշիր-Զորագետի տարածքում Բագրատունիների հերթական ճյուղը հիմնում է երրորդ թագավորությունը (978-1113)։ Նրա առաջին թագավոր Գուրգեն-Կյուրիկեի քանդակը կարելի է տեսնել Հաղպատի վանքի պատին՝ եղբայր Սմբատ Տիեզերակալ (977-990) արքայի հետ։ Վերջինիս թագավորության շրջանում Դվինում շարունակում էր գոյատևել արաբական մի ամիրայություն, որի ղեկավարը հարձակվեց Շիրակի վրա։ Հայոց արքան կարողացավ գլխովին ջախջախել թշնամուն և 987 թվականին ամիրայությունը միացրեց իր տիրույթներին։ Սմբատ Բ-ն թագ տալով վրաց իշխան Ատրներսեհին և Հայոց Արևելից կողմերի իշխան Համամին, ավատատիրական անջատողական ձգտումների համար պարարտ հող նախապատրաստեց։ Ճիշտ է, նրանք ենթարկվում էին Սմբատ Ա-ին, որն իրեն կոչում էր «Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց»։ Այդպես անջատվեցին Վրաց թագավորությունը և Խաչենի իշխանությունը։ Նույն տարում Սյունիների ազդեցիկ տոհմի ներկայացուցիչ Սմբատ իշխանը իրեն հռչակեց Սյունիքի թագավոր։

Հայոց թագավորության միասնությունը արտահայտվում էր հայ առաքելական եկեղեցու գոյությամբ։ Ուստի 992 թվականին, Գագիկ Ա թագավորի օրոք, Հայոց

կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին տեղափոխվեց Անի։ Այն դարձավ ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև կրոնական ու մշակութային կենտրոն։

Բագրատունյաց տերության անկում

Աշոտ Ողորմած և Սմբատ Տիեզերակալ շահնշահերի օրոք առաջացած թագավորություններն ու իշխանությունները զգալիորեն թուլացրին կենտրոնաձիգ պետության հիմքերը։ Թեև Սմբատի եղբայր Գագիկ Ա շահնշահի թագավորության շրջանում (990-1020) հայոց պետականությունն ապրեց իր վերելքը, Բագրատունիների թագավորությունը զարգացման հեռանկարներ չուներ։ «Թագավոր հայոց և վրաց» տիտղոսը կրող Գագիկ արքային ենթարկվում էին Հայկական լեռնաշխարհի տարբեր ծայրամասերում և այսրկովկասյան երկրներում առաջացած ավատատիրական միավորները։ Բագրատունյաց թագավորների հավանությամբ էր ընտրվում նաև հայոց կաթողիկոսը, ում նստավայրը տեղափոխվել էր քաղաքամայր Անի։

998 թվականին արաբ ամիրա Մամլանը արշավեց Բագրատունիների թագավորության վրա։ Դրանից 11 տարի առաջ կործանված Դվինի ամիրայությունից հետո սա արաբների առաջին հարձակումն էր։ Արաբական զորքերի դեմ դուրս եկավ ոչ միայն Գագիկ շահնշահի զորքը, այլև՝ նրա հրամանատարության ներքո, Կարսի ու Տաշիր-Զորագետի Բագրատունիների, Վրաց Բագրատիոնիների, Արծրունիների ու Սյունիների բանակները։ Սա արաբների վերջին արշավանքն էր Հայաստան, որն ավարտվեց իրենց պարտությամբ։

1001 թվականին Գագիկ շահնշահի դեմ է ապստամբում Լոռու թագավոր Դավիթ Կյուրիկյանը հրաժարվեց ճանաչել Անիի Բագրատունիների գերիշխանությունը՝ իրեն համարելով գահի օրինական ժառանգորդ։ Հայոց շահնշահը հարձակվեց նրա թագավորության վրա և ռազմակալեց նրա ամբողջ տարածքը։ Դավիթը երկրից փախավ՝ իր հողերից զրկվելով, և ստացավ «Անհողին» մականունը։ Նա ստիպված եղավ խնդրել Գագիկ Ա-ի ներումը՝ ընդունելով Անիի թագավորի գերիշխանությունը և ետ ստացավ տիրույթների մեծ մասը։ Գագիկ Ա-ն վերացրեց նաև Վայոց ձորի իշխանությունը՝ խլելով Սյունիքից և միացրեց իր տիրույթներին։ Արևելքում գրավվում են Խաչենը, Փառիսոսը և Գարդմանը, իսկ հարավում Վասպուրականի

թագավորությունից՝ Կոգովիտ ու Ծաղկոտն գավառները։ Գագիկ Ա-ի մահից հետո երկրում սկսվեց ճգնաժամ, որն ավարտվեց թագավորության անկմամբ։

1001 թվականին բյուզանդացիները Դավիթ կյուրոպաղատ Բագրատիոնիի մահից հետո գրավեցին Տայքի իշխանությունը։ Մինչ այդ՝ 966 թվականին Բյուզանդիային էր բռնակցվել Տարոնի Բագրատունիների իշխանությունը։ 1008 թվականին Բագրատ III-ը հիմնադրում է Վրաց թագավորությունը։ 1021 թվականին բյուզանդացիները գրավում են նաև Վասպուրականը՝ տեղի Սենեքերիմ Արծրունի թագավորին առաջարկելով Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով։

Հայոց թագավորությունը գրավելու նպատակով Գագիկ շահնշահի մահից հետո բյուզանդացիները բանակցություններ են սկսում նրա որդի Հովհաննես-Սմբատի հետ (1020-1041)։ Վերջինս 1022 թվականին Տրապիզոնում ստորագրում է մի պայմանագիր, որի համաձայն իր մահից հետո երկիրը անցնելու էր Բյուզանդիային։ Չհաշտվելով դրա հետ՝ Հովհաննես-Սմբատի կրտսեր եղբայր Աշոտը ապստամբում է և իրեն հռչակում թագավոր։ Ձինված ընդհարմանը միջամտեցին սպարապետ Վահրամ Պահլավունին և վրաց Բագրատ թագավորը։ Ավագ որդին՝ Հովհաննես-Սմբատը, որին պաշտպանում էր պալատական վերնախավը, ժառանգեց գահը՝ ստանալով Այրարատը։ Կրտսեր եղբայր Աշոտին, ով հայտնի դարձավ որպես Աշոտ Դ Քաջ (1022-1040), բաժին ընկան թագավորության հարավային և արևելյան շրջանները, իսկ եղբոր մահից հետո նա կժառանգեր ողջ երկիրը։

1040 թվականին մահանում է Աշոտը, իսկ մեկ տարի անց՝ Հովհաննես-Սմբատը։ Գահ է բարձրանում Աշոտի որդի տասնութամյա Գագիկ Բ-ն (1042-1045)։ Նրա գահակալությունը օրինական չճանաչելով՝ Բյուզանդիայի Բարսեղ II կայսրը ցանկություն է հայտնում կտակով նախատեսված ժառանգությունը ստանալու։ Բյուզանդական զորքերը մի քանի անգամ հարձակվում են Հայաստանի վրա։ Իրադրությունը փոխվում է այն ժամանակ, երբ արքունիքում ազդեցիկ են դառնում բյուզանդամետ ուժերը, առաջին հերթին՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Վեստ Սարգիս իշխանը։ 1045 Անիի դարպասները բացվում են. մայրաքաղաքի անկումից հետո թագավորը գերեվարվում է, և պատմական հայրենիքում հայոց պետականությունը կործանվում է՝ վերականգնվելով մոտ մեկ հազարամյակ անց։

Կառավարման ձև: Հայոց Բագրատունիների թագավորությունը կառավարման ձևով ավատատիրական, այսինքն ֆեոդալական միապետություն է: Հայկական այդ միապետության գլուխ կանգնած էր Հայոց թագավորը:

Հայոց թագավորը կամ Արքան երկրի լիիշխան տիրակալն էր: Հայոց Արքան օժտված էր քաղաքական, ռազմական, դատաիրավական ու հոգևոր–եկեղեցական լայն իրավալիազորությամբ: Փաստորեն, Հայոց Արքան գրեթե բացարձակ միապետ էր: Հայոց Արքայի անձը համարվում էր սրբազան ու անձեռմխելի:

Բագրատունիները՝ Արքայից արքա

Բագրատունի արքան կրում էր նաև պարսկական ծագում ունեցող բարձրագույն տիտղոս՝ «Շահնշահ Հայոց», «Շահնշահ Հայոց և Վրաց», իրականում լինելով «Շահնշահ Հայոց, Վրաց և Աղուանից», այսինքն՝ հայերեն թարգմանությամբ՝ «Արքայից արքա Հայոց», «Արքայից արքա Հայոց և Վրաց», «Արքայից արքա Հայոց, Վրաց և Աղվանից»: Իրականում այդ բոլոր երկրները և դրանց հարակից մարզերն ու գավառները ենթակա էին Հայոց թագավորին: Դա էր պատճառը, որ Բյուզանդական կայսրությունը, մասնավորապես Կոստանդին Ծիրանածին կայսրը Աշոտ Ա Բագրատունի Հայոց Արքային դիտում է որպես «Արևելքի բոլոր շրջանների տիրակալ» նկատի ունենալով քրիստոնյա Արևելքը: Դեռևս Բագրատունեաց թագավորության հիմնադիրը՝ Աշոտ Ա Բագրատունին, ստեղծեց Հայաստանի, Վիրքի և Աղվանքի իշխանների համադաշինք՝ ֆեդերացիա՝ այն ամրապնդելով ռազմաքաղաքական զորակցությամբ: Հայոց շահնշահի գերագահությունն ընդունում էին ոչ միայն հայ իշխաններն ու թագավորները, այլև Հայաստանում առաջացած մի քանի արաբական ամիրայություններ, Կուր գետից հարավ գտնվող վրացական ու աղվանական իշխանություններ:

Արքունիք: Թագավորը Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականություն վարելիս կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի կամ այլ պաշտոնյաների հետ, որոնք կազմում էին արքունիքը:

Ավատատիրություն: Հայոց թագավորը ավատատիրական բուրգի գագաթն էր: Ինչպես հատուկ էր միջնադարյան Հայաստանի ավատատիրությանը, որը ձևավորվել

էր դեռ Արշակունիների թագավորության ժամանակ, իշխանությունները կամ նախարարությունները ժամանակի ընթացքում ձեռք էին բերել մեծ իրավունքներ։ Եթե նրանք պետական դավաճանություն չէին գործել, թագավորը դրանք խախտել չէր կարող։ Նրանք ենթակա էին թագավորին, սակայն իրենց տիրույթներում ունեին գրեթե անսահմանափակ իշխանություն։ Գավառային տիրակալները իրենց տիրույթը ղեկավարում էին նույն համակարգով, որով թագավորը ղեկավարում էր ողջ Հայաստանը։

Գագիկ Ա՝ հայոց շահնշահ (990-1020)։ Հայկական ավատատիրության առանձնահատկությունը

Հայկական ավատատիրության առանձնահատկությունն այն էր, որ, ի տարբերություն արևմտաեվրոպական ավատատիրության՝ Հայաստանում հողային ավատը պատկանում էր ընտանիքին և ոչ թե անհատին։ Ավատի սեփականատեր Հայաստանում դառնում էր ԸՆՏԱՆԻՔԻ, գերդաստանի կամ ավելի ճիշտ՝ ՏՈՀՄԻ ավագը, որը կարող էր լինել ոչ թե տվյալ վախճանված ավատատիրոջ որդին, այլ ՏՈՀՄԻ կողմնային ճյուղի ավագը, որը տվյալ պահին ավագն էր ամբողջ ՏՈՀՄՈՒՄ։ Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների ժամանակվանից մինչև Բագրատունիները իշխող այս կարգը փոխվեց Կիլիկյան Հայաստանում, որտեղ ավատատիրությունը նման էր Արևմտյան Եվրոպայի ավատատիրական կարգերին։

Գործակալություններ։ Բագրատունի թագավորը հայոց պետությունը կառավարում էր արքունիքի միջոցով։ Դա ուրույն կառույց էր, որը հատուկ էր միջնադարյան ավատատիրական պետություններին և հիշեցնում էր ժամանակակից երկրների կառավարությունները։ Արքունիքը գործակալությունների մի համակարգ էր, որտեղ բարձրաստիճան պաշտոնյաները կամ գործակալները սովորաբար արքայական տան անդամներ էին կամ թագավորին մերձավոր խոշոր ավատատերեր։

Արքունիքում մեծ դերակատարում ունեին իշխանաց իշխանը և հայոց սպարապետը։ Իշխանաց իշխանը թագավորին պատասխանատու էր իշխանների գործունեության համար։ Նրա ենթակայության տակ էին արքայական տիրույթները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաներն ու հարկահանները։

Իշխանաց իշխանի բարձր պաշտոնը սովորաբար տրվում էր արքայի եղբայրներից մեկին կամ թագաժառանգին։ Արշակունիների օրոք դրան փոխարինում էր հազարապետի պաշտոնը, որը զբաղեցնում էին Գնունիները կամ Ամատունիները։ Հայոց սպարապետը պետության զինված ուժերի՝ բանակի հրամանատարն էր։ 9-11-րդ դարերում սպարապետությունը վարել են Բագրատունիների, ապա՝ Պահլավունիների ներկայացուցիչները։ Վաղ միջնադարում այդ պաշտոնը ժառանգաբար պատկանել էր Մամիկոնյան տոհմին։ Պատերազմի ժամանակ ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները (սպարապետները) ենթարկվում էին Անիի թագավորության սպարապետին։

Գլխավոր դատավորի պաշտոնն առաջվա նման զբաղեցնում էր երկրի հոգևոր առաջնորդը։ Եթե հելլենիստական Հայաստանում դա գլխավոր քուրմն էր, ապա քրիստոնեության ընդունումից հետո (301)՝ հայոց կաթողիկոսը։ Դատավարությունն իրականացվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոնների ու սովորութային իրավունքի նորմերի համաձայն։ Փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով և սովորութային իրավունքով։ Միջնադարի ամբողջ ընթացքում՝ 5-17-րդ դարերում, եկեղեցին մեծ մասնակցություն է ունեցել երկրի կառավարման մեջ։ Բագրատունի թագավորների օրոք եկեղեցին էր ապահովում երկրի միասնականությունը։ Եպիսկոպոսական բոլոր թեմերը ենթակա էին հայոց կաթողիկոսին, որն իր հերթին ճանաչում էր թագավորի գերիշխանությունը։ Հայոց կաթողիկոսները մնայուն նստավայր չունեին։ 485 թվականին՝ Վահան Մամիկոնյանի տանուտիրության տարիներին, կաթողիկոսարանը Վաղարշապատից տեղափոխվել էր Դվին, որտեղ մնացել էր մինչև 927 թվականը։ 927-947 թվականներին կաթողիկոսը հանգրվանել էր Աղթամար կղզում, 947-1001 թվականներին՝ Արգինայում, իսկ 1001 թվականից՝ Անիում։ Հայոց թագավորի դիրքորոշումը վճռական էր կաթողիկոսի ընտրության ժամանակ։

Ավատատիրական բուրգում թագավորից ցածր կանգնած էին իշխանները։ Իշխանը ոչ միայն տիրող ավագանու ներկայացուցիչն է, այլև առանձին ռազմաքաղաքական միավորման գլուխը մինչդասակարգայինից դասակարգային հասարակության անցման շրջանում։ Արտոնյալ, ժառանգական ավագանին՝ ազնվականությունը բաղկացած է եղել մանր ու խոշոր գավառատերերի՝ կրտսեր

իշխանի, իշխանի, ավագ իշխանի, տանուտիրոջ, նախարարի, ավագ նախարարի, նահանգատերեր կուսակալների, գահերեց իշխանների ու բդեշխների պաշտոններից։ Իշխանական տների նման՝ խոշոր հողատեր էր դարձել նաև Հայ եկեղեցին։ Մեծաքանակ վանքերը տիրում էին բազմաթիվ գյուղերի։ Տաթևի վանքին, օրինակ 10-րդ դարի սկզբներին պատկանում էր 22 գյուղ։

Բանակ: Բագրատունիները հատուկ նշանակություն էին տալիս բանակի կազմակերպմանը։ Պատերազմների ժամանակ բանակը համալրվում էր, և զորքի թիվը հասնում էր 100 000-ի։ Բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից։ Արքունի գունդը անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, իսկ մարզպանական գունդը կազմվում էր իշխանական զորաջոկատներից։ Բանակը կազմված էր հեծելազորից, հետևակից և սակրավորական զորամասերից։ Զորքը համալրում էին ազատները, շինականները և քաղաքաբնակները։ Հայոց զորքի հիմքը այրուձին՝ հեծելազորն էր։ Բագրատունի թագավորների հենարանն էր արքունական գունդը, որը կազմված էր թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից։ Այն պահվում էր մեծ մասամբ մայրաքաղաքում և արքայական ամրոցներում։

Սմբատ Տիեզերակալ (977-990) թագավորը, կառուցելով արտաքին մեծ պարիսպները, գլխավոր դարպասի մոտ՝ պարսպի վրա տեղադրել տվեց զինանշանի պատկերը։ Ներքևի կամ առաջին աստիճանը կազմում է բարձր շրջանակով ընդհանուր պատից առանձնացված երկհարկ եկեղեցատիպ ուղղանկյուն շրջանակը։ Առաջին հարկի կամ մեծ ուղղանկյան մեջ արձանային եղանակով քանդակված է գլխով դեպի ձախ ուղղված հովազ՝ վարգի պահին։ Հովազի մարմինը երկայնակի ձգված է, երկար վիզը ձգված է վեր, մեջքը ճկված է ներքև, առջևի ձախ թաթը հետ է ընկած, հետևի նույն ոտքը՝ առաջ, որով ապահովված է հավաստի վարգը, պոչը՝ մարմնին զուգահեռ, ձգված է օդում։ Քանդակն իրականացված է հարթ մշակումով։ Շրջանակի երկրորդ հարկի քարի վրա կլոր շրջանակ-փոս է փորված, ինչը փոխարինում է գնդին՝ իշխանության նշանին։ Երկրորդ հարկի շրջակալի կենտրոնից դեպի վեր, ինչպես եկեղեցու գմբեթի վրա, գունավոր, ռոմբավոր խաչ է դրված։ Խաչը հենված է եռանկյունաձև ռոմբի վրա։ Խաչի կենտրոնական ռոմբի կենտրոնում ևս շրջանակ-փոսիկ է փորված՝ որպես իշխանության նշան։

Հայոց Արշակունի թագավորների թագադիրներ կամ Մարզպանական Հայաստանի իշխաններ եղած ժամանակ Բագրատունիների զինանշանի մասին տեղեկություններ չկան։ Հայաստանի թագավոր եղած ժամանակ նրանց զինանշանի վրա առկա են թե՝ առյուծի կամ հովազի, թե՝ արծվի պատկերներ։ Բագրատունիների առյուծի պատկերով հնագույն զինանշանը գտնվում է Կարսի Առաքելոց եկեղեցու հարավային ճակատին։ Առաքելոց եկեղեցին կառուցվել է Աշոտ Երկաթի եղբոր՝ Աբաս Բագրատունի թագավորի օրոք՝ 930-943 թվականներին։ Առյուծի պատկերն իրականացված է հարթաքանդակի եղանակով քարի վրա փորված քառակուսու ներսում։ Առյուծը գլխով ուղղված է դեպի աջ և նայում է դիտողին։ Որպես իշխանության նշան՝ առջևի աջ թաթը բարձրացրած է վեր, պոչը՝ վեր տնկված։

Բագրատունիների զինանշան-արծիվը քանդակված է արձանային եղանակով և ունի ուղղահայաց կառուցվածք։ Թռչնի թևերը հպված են մարմնին, կուրծքը դուրս ցցված է, վիզը թեքված է մի փոքր ձախ, գլուխը ջարդված է։ Ճանկերի մեջ՝ պոչին սեղմած պահում է զոհին։ Քանդակն իրականացված է թեփուկաքանդակային եղանակով։ Թռչնի գլուխը մի փոքր ձախ է թեքված եղել, որով որոշվում է նաև կրծքի ձախ ուղղվածությունը։

Տնտեսություն: Միջնադարյան Հայաստանում տնտեսության, ու բարեկեցության հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն էր՝ իր երկու ճյուղերով՝ երկրագործությամբ ու անասնապահությամբ։ Մարդկության առաջացումից ի վեր Հայկական լեռնաշխարհում զբաղվել են գյուղատնտեսությամբ, քանի որ երկրագործության ու անասնապահության համար երկիրը բարենպաստ պայմաններ ուներ։ Լեռնաշխարհի խոշոր գետերի՝ Եփրատի, Արաքսի, Կուրի, Տիգրիսի ու Ճորոխի հովիտները հացահատիկի մշակման, բանջարանոցային մշակաբույսերի ու այգեգործության զարգացման լավագույն շրջաններ էին։ Հայտնի էին Այրարատյան, Շիրակի, Տարոնի (Մշո), Բագրևանդի (Ալաշկերտի), Բասենի և այլ դաշտեր։ Հացաբույսերից լայն տարածում էր գտել ցորենի, գարու, հաճարի, բրնձի մշակումը։ Երկաթե խոփով ծանր գութանի լայն տարածումը հեղաշրջիչ նշանակություն ունեցավ երկրագործության համար, քանի որ գութանով վարում էին ինչպես բերրի, այնպես էլ՝ խոպան հողերը։

Արաբական տիրապետության տապալումից հետո երկրագործական արտադրանքը մնում էր Հայաստանում։ Բերքատվության բարձրացման ու գյուղատնտեսական աշխատանքի կազմակերպման համար զարկ է տրվում երկրագործական տեխնիկայի զարգացմանը։ Լայնորեն տարածվեց հողի մշակման եռադաշտային համակարգը։ Դրա տեխնիկան իրենից ներկայացնում էր հետևյալը. վարելահողը բաժանվում էր երեք մասի, որի մի մասի հողը հերկվում էր և, առանց ցանքս կատարելու, թողնվում էր անմշակ վիճակում։ Վարելահողի երկրորդ մասում աշնանացան էր կատարվում, իսկ երրորդ մասում՝ գարնանացան։ Այդպիսով՝ եռադաշտային համակարգը հնարավորություն էր տալիս հողին հանգիստ տալ՝ բերքատվությունը բարձրացնելու նպատակով։ Խոշոր տնտեսություններում՝ ագարակներում ու դաստակերտներում, հողը հերկում էին գութանով։ Նոր մշակելի դարձած խոպան տարածքները հաճախ կոչվում էին նորք։

Երկրագործության զարգացմանը նպաստում էր պարարտավորումն ու հողի ոռոգումը։ Բագրատունիների թագավորության շրջանում ընդարձակվում է ոռոգման ցանցը, որը ենթադրում էր հին ջրանցքների նորոգում և նորերի կառուցում։ Հողամշակման և նրա տեխնիկայի բարելավմանը զուգընթաց առաջադիմում էր գյուղմթերքների մշակումը։ Հայաստանում Լայն տարածում են ստանում Գինու հնձանները, ջրաղացներն ու ձիթհանները։ Դրանք կառուցվում էին բերդերի ու խոշոր վանական համալիրների մոտ։ Գետահովիտներում ու հարթավայրերում աճեցվում էին պտղատու ծառեր, իսկ Այրարատյան դաշտում, Վանա լճի ավազանում, Հայաստանի հարավային տաք կլիմա ունեցող վայրերում տարածված էր խաղողագործությունը։ Նորություն էր բանջարանոցային որոշ մշակաբույսերի՝ լոբու, վարունգի, կաղամբի, գազարի, ձմերուկի մշակությունը։

Առևտուր: Արհեստագործության ու գյուղատնտեսության զարգացումը խթանում է ներքին և արտաքին առևտրի կտրուկ աճը։ Մի կողմից քաղաքային բնակչությունը ուներ գյուղատնտեսական մթերքների կարիք, իսկ արհեստավորները՝ գյուղատնտեսական հումքի մեծ պահանջ, մյուս կողմից՝ գյուղում անհրաժեշտ էին արհեստավորների պատրաստած գործիքներ, հագուստ ու կոշկեղեն։ Քաղաքներում վաճառքի կետեր ունեին նաև վանքերն ու արհեստավորները։ Մեծ քաղաքներում և

ճանապարհների խաչմերուկներին սկսեցին կազմակերպվել կիրակնօրյա շուկաներ, ինչպես նաև՝ ամենամյա տոնավաճառներ։

Մշակույթ: Զարգացած միջնադարում՝ 9-14-րդ դարերում, բարձր զարգացման հասավ նյութական և հոգևոր մշակույթը։ Վերածնունդը պայմանավորված էր երկրի քաղաքական և տնտեսական առաջընթացով. 9-11-րդ դարերում վերականգնվել էր հայոց պետականությունը՝ ի դեմս Բագրատունիների թագավորության, իսկ 12-14-րդ դարերում Արևելյան Հայաստանի մեծ մասը՝ որպես Զաքարյան իշխանապետություն, գտնվում էր քրիստոնեադավան Վրաց թագավորության կազմում։ Հայ թագավորները և իշխանները դպրոցական գործի, գիտության և արվեստի հովանավորներ էին։ Մյուս կողմից՝ միջնադարյան քաղաքներն առաջ էին քաշում աշխարհիկ կրթություն ստացած, բնական գիտություններին, իրավագիտությանն ու բժշկագիտությանը տեղյակ մարդկանց մեծ պահանջ։

Քաղաքներում ու խոշոր վանական համալիրներում աճեց դպրոցների թիվը, ընդլայնվեց դասավանդվող առարկաների քանակը։ Նախնական ուսուցումը կատարվում էր տարրական դպրոցներում, որոնք, սովորաբար, պահվում էին եկեղեցու և պետության հաշվին։ Կային նաև վճարովի մասնավոր դպրոցներ։ Տարրական դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել և երգել։ Երեխաները դպրոց էին ընդունվում 12-13 տարեկանում և սովորում շուրջ 3 տարի։ Բարձրագույն դպրոցներում՝ վարդապետարաններում, դասընթացի տևողությունը 7-8 տարի էր։ Դրանից հետո սաները ստանում էին վարդապետի աստիճան և ուսուցչությամբ զբաղվելու իրավունք։ Հայտնի էր Անիի վարդապետարանը, որտեղ գործունեություն էր ծավալել Հովհաննես Իմաստասերը։

Գիտություն և գրականություն: Դպրոցների ու վարդապետարանների առատությամբ պայմանավորված՝ զարգացան բնական ու հումանիտար գիտությունները։ Ծաղկում ապրեց պատմագրությունը, որն արտահայտվում էր «Հայոց պատմությունների» ստեղծմամբ։ Հեղինակներն իրենց աշխատությունն սկսում էին այնտեղից, որտեղ կանգ էր առել նախորդ պատմիչը։ Այդպես շարադրվեց կաթողիկոս ու քաղաքական գործիչ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը»։

Հայ գրականության մեջ նոր երևույթ էին աշխարհիկ թեմաներով ստեղծագործությունները, որի հիմնադիրն էր բանաստեղծ Գրիգոր Նարեկացին։ Նրա

տաղերը գովերգում են բնությունը, մարդուն, սերը։ Համաշխարհային հռչակ է վայելում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը։ Այն ժողովրդի կողմից ստացել է «Նարեկ» անունը։ Զարգացած միջնադարի հայ փիլիսոփայաներից նշանավոր էր զորավար Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, ով թարգմանում և մեկնաբանում էր հին հունական փիլիսոփայական աշխատությունները, ինչպես նաև բանաստեղծ Հովհաննես Իմաստասերը, ով ղեկավարել էր Անիի վարդապետարանը։

Ճարտարապետություն և կերպարվեստ: 9-րդ դարից սկսվեց միջնադարյան Հայաստանի առավել հայտնի վանական համալիրների կառուցումը։ Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու հրամանով Մանուել ճարտարապետն Աղթամար կղզում կառուցեց Սուրբ Խաչ եկեղեցին։ Կառույցի պատերը զարդարված են քանդակներով, իսկ ներքնապատերը՝ որմնանկարներով։ Աղթամարում կանգնեցվեց արարողությունների դահլիճ և սկսվեց նավահանգստի շինարարությունը։ Կարս քաղաքում Աբաս Ա թագավորի հրահանգով կառուցվեց Առաքելոց եկեղեցին և ամրացվեց Կարսի բերդը։ Անիի եկեղեցիներից առավել նշանավոր է Մայր տաճարը՝ Կաթողիկեն, որի ճարտարապետն էր Տրդատը։ Մայրաքաղաքի շուրջ կառուցվեցին Աշոտաշեն ու Սմբատաշեն պարիսպները։ Ամրոցաշինության վառ օրինակ է Ամբերդը։

Կերպարվեստի ճյուղերից զարգացում են ապրում որմնանկարչությունը և մանրանկարչությունը։ Պատկերազարդված ամենահին ձեռագրերը գրվել են 9-րդ դարում և հետագա դարերում դարձել սովորական երևույթ։ Նկարազարդ ձեռագրերի համար պատվիրում էին արծաթից և կաշվից պատրաստված, թանկարժեք քարերով զարդարված կազմեր։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ժամկոչյան Հ.Գ. և ուր. - Հայ ժողովրդի պատմություն. սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան 1973

2. Մ.Ա.Կատվալյան, Պ.Հ.Հովհաննիսյան, Է.Գ.Մինասյան - Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ԵՊՀ հրատ., 2012 թ.

3. Հայոց պատմություն, հ. II. Միջին դարեր (IV դ. - XVII դ. առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, "Զանգակ-97" հրատարակչություն, 2014